Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
Գիտական խորհրդի 2022թ.
հունիսի 27-ի N1-06/22/8 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2022-2026ԹԹ. ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիմնական միջոցառումների իրականացման ընթացքը.

N	***Միջոցառման անվանում***	***Իրականացվող աշխատանքներ և ակնկալվող արդյունքներ***	***Համագործակցողներ***	***Նշումներ կատարման մասին***
1	Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցում	- ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերի պահպանման նկատմամբ հսկողության ուժեղացում, - գնահատման գործընթացի, այդ թվում բողոքարկման կատարելագործում, գործող կարգերի վերանայում, - գիտելիքի գնահատման արդյունքների բողոքարկման մեխանիզմների կատարելագործում, բողոքարկումների արդյունավետության բարձրացում:	Ուսումնամեթոդական բաժին, որակի ապահովման բաժին, ուսանողական խորհուրդ, դեկանատներ	
2	Կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտի ձևավորում	- քարոզչական տարբեր միջոցառումների, հանդիպումների, քննարկումների իրականացում, - ուսանողների շրջանում գիտելիքի արժևորում և նրանց մեջ «կոռուպցիոն ճանապարհով գնահատական վաստակելու» երևույթի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունքի արմատավորում, - տարբեր քարոզչական նյութերի (այդ թվում նաև էլեկտրոնային) մշակում և տարածում:	Հրատարակչության, լրատվության, տեխնիկական սպասարկման և հասարակայնության հետ կապի բաժին, ուսանողական խորհուրդ, ՈՒԳԸ, կուրսղեկներ	
3	Համալսարանականների իրազեկվածության մակարդակի բարձրացում	- համալսարանի գործունեությունը կանոնակարգող տարբեր իրավական ակտերի, ներբուհական կարգերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում,	Դեկանատներ, հրատարակչության, լրատվության, տեխնիկական սպասարկման և հասարակայնության	

		- իրավական ակտերի հասանելիության աստիճանի բարձրացում, դրանցից օգտվելու հմտությունների զարգացում:	հետ կապի բաժին, ուսանողական խորհուրդ, ՈՒԳԸ, կուրսղեկներ	
4	ՇՏՀ հեղինակության և մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում	- մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացման միջոցառումներ, - ՇՏՀ-ում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության և մրցունակության աստիճանի բարձրացում:	Դեկանատներ, որակի ապահովման բաժին, ուսանողական խորհուրդ	
5	Կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովում	- կրթական ծրագրերի բովանդակության, առարկայական ծրագրերի, հարցաշարերի, գրականության և այլ նյութերի հասանելիության ապահովում, - քննական գործընթացի արդյունքների հրապարակման միջոցառումների հետևողական իրականացում, - տեղափոխումների, հեռացումների, փոխանակումների և այլ վարչական գործընթացների հրապարակայնության ապահովում:	Դեկանատներ, որակի ապահովման բաժին, ուսանողական խորհուրդ	
6	Կոռուպցիոն ռիսկեր պարունակող ներբուհական իրավական ակտերի կատարելագործում	- ընդունված ներքին իրավական ակտերի կիրառման արդյունավետության և բացահայտված թերությունների մշտադիտարկում ֆակուլտետների գիտական խորհուրդներում, - գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների իրականացում, - ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի մշակում և գործուն	Ռեկտորի վարչակազմ, կադրերի և ընդհանուր բաժին,	

		մեխանիզմերի ներդրում:		
7	Համալսարանում իրա-կանացվող ընդունելութ-յան գործընթացի վերահսկողություն	- սահմանված ընթացակարգերի պահպանմանն ուղղված վերահսկողության իրականացում, վերահսկողության նոր մեխանիզմների մշակում և ներդրում:	Ընդունող հանձնաժողով, պրոռեկտորներ	
8	Հակակոռուպցիոն միջո-ցառումներում ուսանող-ների մասնակցության խթանում	- ուսանողական կառույցների կարողությունների զարգացում, - ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում, - հակակոռուպցիոն ծրագրերում ուսանողների հաջողված փորձի ներկայացում	Ընդունող հանձնաժողով, պրոռեկտորներ, կարիերայի զարգացման և շարունակական կրթության կենտրոն	
9	Համալսարանում կառավարման գործընթացի կատարելագործում	- պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների իրականացում, մրցույթներում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցում, մրցակցային գործընթացի խրախուսում, - վարչական և այլ պաշտոնների աշխատանքների նկարագրության և զբաղեցրած պաշտոնի համապատասխանությունը ապահովող համակարգի ներդրում, - օրենդրությամբ սահմանված գնումների գործընթացի իրականացում և հրապարակայնության ապահովում, - ֆինանսական կառավարման, ենթակառուցվածքների աշխատանքների հաշվետվողականության բարձրացում, - ստորաբաժանումների աշխատանքի	Ռեկտորի վարչակազմ, կադրերի և ընդհանուր բաժին,	

		պլանավորման, հաշվետվողականության և գնահատման համակարգերի մշակմանը և ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում, - ներհամալսարանական կառավարման ընթացակարգերի կատարելագործմանն ու էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգերի զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացում:		
10	Հակակոռուպցիոն միջոցառումների միջազգային և հայաստանյան առաջատար փորձի ուսումնասիրություն և տեղայնացում	- հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման գործընթացում միջազգային և հայաստանյան առաջատար փորձի կիրառում տարբեր միջազգային և հայաստանյան կազմակերպությունների աջակցությամբ, - սեմինարների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների իրականացում:	Արտաքին կապերի, կարի-երայի զարգացման և շրունակական կրթության կենտրոն	
11	Հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների մշտադիտարկում, ուսանողների հետ հետադարձ կապի ապահովում	- դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական և ՇՏՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումների իրականացում, դրանց կատարելագործում, - ուսանողների շրջանում տարբեր հարցումների իրականացում, այդ թվում՝ ուսանողական կառույցների կողմից և անկախ կազմակերպությունների ներգրավմամբ, - առցանց գործիքների զարգացում:	Ուսումնամեթոդական բաժին, որակի ապահովման բաժին, ուսանողական խորհուրդ	

Հանձնաժողովի նախագահ՝ ստորագրություն Հարությունյան Մ. Ա.